Տարօնի իշխան Բագարատի։ Յովհաննէս Ովայեցի կաթողիկոսի հայրապետութեան ութերորդ տարին, երբ նա գժտուեց Բագարատ իշխանի հետ, վերջինս էր «հրամանատար եւ իշխան իշխանաց Հայոց» (Յովհ. կթղ. էջ 65)։ Ովայեցին մեռել է հ. թ. 302=854 Փրկչ., մնալով գահի վրայ 22 տարի, ուրեմն 832 թուից սկսած։ (Ասողիկի 25 տ. գրչագրի սխալ է)։ Ութերորդ տարին, այսինքն՝ 935 թուին, Ամորիայի արշաւանքի ժամանակ, իշխանաց իշխան էր Բագարատ։ Ըստ Թովմա Արծրունուն, Աբուսեթի գալստեան տարին, որ է 850 թիւը, Բագարատ «ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութեան իշխանաց հայոց» (էջ 119)։ Նանայ սարկաւագի Յովհաննու աւետարանի մեկնութեան յառաջաբանում ասւում է Բագարատի համար. «Որ եւ պետ իշխանաց երրեմն ի բարբարոս ազգէն հագարացւոց անուանեալ» (Թարգմ. Նախնեաց, էջ 620)։

Այս վկայութիւնները հարկադրում են ընդունել, որ Բագարատ իշխանը, թերեւս, որպէս տան երիցագոյն անդամը, հօր՝ Մոսակերի մահից յետոյ ճանաչուած էր որպէս իշխան իշխանաց։ Իսկ Սմբատը միայն սպարապետ էր, ինչպէս նրան կոչում է Թովմա Արծրունին Բուղայի հալածանքի ժամանակ (էջ 194)։

Միւս կողմից, Կաղանկատուացու նոր հատուածի եւ արաբական աղբիւրների համաձայն, Բաբակի սպանութիւնից յետոյ Սահլ Սմբատեանն էր, որ նշանակուեց իշխան հայոց, վրաց եւ աղուանից, տիրել «արքայարար»։ Խնդիրը նորէն կնճռոտւում է։ Թերեւս պէտք կայ յիշելու, որ արաբական վարչութիւնը չորս Հայաստան դիտէր։ Սահլ Սմբատեանը իսկապէս պետ էր այն Հայաստանի, որի մէջ մտնում էին Աղուանք եւ մասամբ վիրական հողերը. ուստի կարելի է ասել, որ նա իշխանն էր Հայոց Աղուանից եւ Վրաց։

Արդեօք նման վիճակ չունէ՞ր եւ Տարօնի Բագարատը։ Տարօնի շրջանը եւս կազմում էր մի ուրիշ Հայաստան, գուցէ, առաջին Հայաստանը։

Թ. Արծրունին վկայում է որ արաբները «տուն Հայոց անուանեալ առաջին ասէին զՏարօն» (էջ 265)։ Դարձեալ՝ Աբուսեթ գտնւում էր «մերձ ի սահմանս Տարօնոյ առաջին կոչեցեալ Հայոց» (էջ 119)։ Այս պատճառով էլ Տարօնի իշխանը կոչւում էր Հայոց իշխան (էջ 248)։

Արաբական հարկացուցակները ապացուցում են որ Տարօնը մեզ զբաղեցնող շրջանում վարչական ինքնուրոյն միաւոր էր։

Իբն Խալդունի ցուցակով, որ հիմնուած է մերձ 785 թուի դիւանական տեղեկութիւնների վրայ, Հայաստան վճարում էր 13 միլիոն դրամ։ Այնինչ Կոդամայի տեղեկութեամբ, քաղուած 820 եւ մասամբ 850 թուի դիւանից, Հայաստանի տուրքն էր 4 միլիոն, եւ Տարօնը առանձին տալիս էր մի միլիոն դրամ (Kremer, Culturgeschishte des Orients I, 315 եւ հետ)։

Հարկաւ, այն Հայաստանը որ վճարում էր 13 միլիոն, եւ այն որ վճարում էր 4 միլիոն, տարբեր են աշխարհագրական ծաւալով։ Առաջինը ընդգրկում է ամբողջ Հայաստանը արտրսկան իմաստով, մինչդեռ երկրորդի մէջ չեն մտնում ոչ Տարօնը, ոչ Արձն եւ Մուխարկին, որ նոյնպէս առանձին միաւոր էր 4 միլիոն եւ 100 հազար դրամ հարկով, այլ եւ հանուած է Սպերը շրջակայ հողամասերով, որ անցել էին Բիւզանդիային։

Եթէ ենթադրենք որ Տարօնի իշխան Բագրատն էր այն archon ton archonton, որ առաջնորդում էր հայ այրուձին Ամորիայի արշաւանքի ժամանակ, եւ ոչ Սմբատը կամ Սահլը, անհիմն չէր լինել կարծել, որ նրա անձի ընտրութեան մէջ դեր են կատարել չէ թէ միայն իր ուսագութիւնը, այլ եւ արաբական քաղաքական նկատումները։

Արդարեւ, ծայրագաւառներին այժ տալ, նրանց իշխաններին յառաջ քաշել ընդդէմ կենդրոնի՝ պարզ հաշիւ էր արաբների կողմից կատեցնելու կամ խոպառ խանդարելու հայ հողերի քաղաքական համախմբումը։ Պատահական երեւոյթ չէ, որ իշխանաց իշխանի կից տեսնում ենք Վասպուրականի իշխանին, որպէս զօրաւոր հայ գնդերի։ Արծրունի տունը ոտի հանել Շիրակում հաստատուած Բագրատունիների դէմ որոշ քաղաքականութիւն էր։ Արաբները ձգտում էին կտրել կենդրոնից իրենց անմիջական ազդեցութեան ենթակայ Տարօնը եւ Վասպուրականը։